ՀԱՍՄԻԿ ՍԻՄՈՆՅԱՆ
HASMIK SIMONYAN

ՎԱՆԻ 1896Թ. ԿՈՏՈՐԱԾԻ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

1896թ. հունիսի 3-ից սկսված և մեկ շաբաթ տևացող Վանի ինքնապաշտպանական կռիվները՝ շատ ծանր ու կորստաբեր եղավ հայ ժողովրդի համար: Ըստ Համբարձումի Երամյանի քաղաքում կորուստները հասնում էին 400 հոգու, որոնցից շատերը զոհվել էին նախքան դիմադրություն կազմակերպելը, իսկ մի մասն էլ սպանվել էր զինված երիտասարդների հեռանալուց հետո՝ բնակչությանը հաշվեհարդարի ենթարկելու ժամանակ:[1] Սրանց մեծ մասը ծերեր էին, հիվանդներ, իսկ մնացածը՝ կանայք ու երեխաներ: Արտակ Դարբինյանը, նույնպես գտնում էր, որ ինքնապաշտպանության ընթացքում հայերը տվեցին 400 զոհ, իսկ բուն կռվում ունեցան 20 սպանված ու վիրավոր:[2]

Վանի դեպքերի մասին «Նոր Դար» թերթում, Կ.Պոլսից հեռագրում են, որ հունիսի 11-ին Վանում տեղի ունեցած անկարգությունների հետևանքով սպանվեցին բազմաթիվ հայեր: Շատ հայեր թաքնվեցին անգլիական հյուպատոսարանում: Ընդհանուր կոտորածի թիվը հասնում էր մոտ 400-ի:[3]

Միայն Այգեստանում թալանվեց 3000 և այրվեց 600 տուն ու եկեղեցի, որի նյութական վնասը կազմում էր 1մլն ոսկի: Իսկ Հալիմ էֆենդին ոգեշնչելով թուրք ոստիկին հայտարարում էր. «Զավակներս, նախ կոտորեք, իսկ կողոպտելը թող մնա վերջում»:[4] Բազմաթիվ դպրոցներ, եկեղեցիներ ու տներ, մոտ 500-ի հասնող, ամբողջությամբ այրվեցին: Ականատեսն այդ մասին գրում է. «Չտեսնողը ... բնավ չկրնար հավատալ, թե մարդկային կամ նույնիսկ սաթայելյան դասեր կրնան այսպես մոխրակույտ մը դարձնել դարավոր դրախտանման վայրեր, գոչի գործ չէ գրել, նույնիսկ տեսնող աչքն ալ չկրնար հավատալ, թե իր տեսածն իրականություն է»:[5] Ամեն օր մեռնում էր 50-60 մարդ:

Վանում կոտորածն ավարտելուց հետո Սաաեդդինը ձեռնամուխ եղավ կոտորել ողջ Վասպուրականի հայությանը, այդ թվում նաև գյուղերի ու գավառների բնակչությանը, որտեղ թուրքերի ու քրդերի ձեռքով զոհվեցին մոտ 20.000 հայեր: Գյուղացիների միայն մի մասին հաջողվեց ապաստան գտնել Նարեկի

---

[1] Հ.Երամյան, Հուշամատեան Վան-Վասպուրականի, հ. Ա, Ալեքսանդրիա, 1929, էջ 372:
[2] Ա.Դարբինյան, Հայ ազատագրական շարժման օրերէն, Պարիզ, 1947, էջ 76:
[3] «Նոր-Դար» թերթ, 1896, հունիսի 15 , շաբաթ, էջ 3:
[4] Կ.Պողոսյան, Հայկական հարցի և հայոց ցեղասպանության պատմություն, հ.1, Ե., 2000, էջ 451:
[5] Ծ.Պ.Աղայան, «Հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմությունից», Ե., 1976, էջ 155-156:

վանքում. Լիմ, Աղթամար և Կտուց կղզիներում, ինչպես նաև Վարագա լեռներում: Գյուղերում և գավառներում կատարված կոտորածի մասին ասվում է նաև արխիվային փաստաթղթերից մեկում, որտեղ նշվում է, որ կոտորածի թիվը 15-20.000-ից պակաս չէր: Շատ գյուղեր և թաղեր կորցրեցին իրենց բնակչության 9/10 մասը, օրինակ՝ Արծակ, Շահպաղի, Նարեկ և շատ այլ գյուղեր, ինչպես նաև Հայկավանքի թաղը: Սահից փրկված բնակչությունը թաքնվում էր հորերում, գետնափոր նկուղներում, նույնիսկ աղբանոցների մեջ: Թափառական էին դառել գյուղացիները, անտեր թողնելով իրենց տները, որոնք հրկիզվում էին թշնամու ձեռքով: Ազատ էր մնացել միայն քաղաքի 1/3 մասը, այսինքն քաղաքամեջը և Այգեստանի մի քանի կենտրոնական թաղեր: Այրված էր քաղաքի երկհարանի և աչքի ընկնող տները, մոտ 500-ից ավելի:[6]

Ծանր կորուստներ ունեցավ Արճեշ գյուղաքաղաքը՝ իր շրջակա Ալճաազի գավառով: Արճեշում, Հաջի Թիմուր և էմին ցեղապետները, կենդանի-կենդանի թաղեցին հայերին ցորենի հորերում:

Մեկ այլ արխիվային փաստաթղթում կարդում ենք, որ կոտորածի ընթացքում բազմությունը այս ու այն կողմ փախչելով, մտնում էր պատահած խանութների ածխանոցը՝ փորձելով փրկել իր կյանքը: Շատերը 2-3 օր հետո էին միայն դուրս գալիս թաքստոցից: Թուրք ոսոխը ոչ միայն թալանում էր ունեցվածքը, այլև վախեցնում նորապսակ հարսներին ու դեռատի աղջիկներին, նույնիսկ մորթել էր մի քանի կանանց: Ականատեսը նշում է, որ ավելի լավ էր մեռնել, քան թե տեսնել սեփական աչքերով անմեղ ժողովրդի ջարդը:[7]

Արճեշի 6 գյուղերում 580 ընտանիքներից ազատվեց միայն 39-ը:[8]

Իսկ բնակչության ունեցվածքն ու հողակտորն անցնում էր մահմեդականների ձեռքը: Այսպես, Բաքնոցի քյոռ Հյուսեին փաշան խնայելով հայ բնակչության կյանքը, խլում էր նրանցից շարժական ու անշարժ գույքը՝ վերջիններիս ստրկացնելով: «Հնչակ» ամսագրում ականատեսը պատմում է, թե ինչպես Արճրա գյուղը կեսգիշերին ենթարկվեց հարձակման ու թալանման: Մոտ 15 ձիավորներ գյուղի շուրջ կրակոցներ արձակելով խուճապի մատնեցին կանանց ու երեխաներին, որոնց բարձրաձայն լացն ու կոծը, այնպես էլ հրացանների ձայները փախցրին գյուղի ոչխարների 1/3 մասը: Սակայն գյուղացիները հասկանալով իրենց գլխի գալիքը, որոշեցին դիմադրություն ցույց տալ, գինվեցին ինչով կկարողանային: Թշնամին չկարողացավ գյուղ մտնել և

---

[6] ՀԱԱ, ֆ.56, ց.16, գ.184, թ.55-56:
[7] ՀԱԱ, ֆ.56, ց.17, գ.72, թ.18:
[8] Ռ.Հովհաննիսյան, Վանի 1896թ. ինքնապաշտպանությունը, «Լրաբեր», Ե., 1976, թիվ 7, էջ 65:

առաջարկեց բանակցություններ վարել: Բեյս Նասոն գնաց ստիպված Սահ-մուտ աղայի մոտ, վերջինս այս էր հրամայել. «գիւղը չեմ մտներ, միայն թող մեզի մնայ ձեր ոչխարներ, դուարներ և տան ապրանքներ ինձ յանձնէք առնեմ տանիմ»:[9]

Գյուղն ուրիշ խմբերի կողմից նույնպես ենթարկվեց հարձակումների, այլևս գյուղացիները չկարողանալով դիմադրել, խնդրեցին նրանց թույլ տալ իրենց ընտանիքներին դուրս բերել գյուղից: Մինչ դեռ նրանք գյուղում էին մեկ ուրիշ խումբ գալով կրակի մատնեց ողջ գյուղը: Բնական է, բախտի քմահաճույքին մատնված գյուղացին թողնելու էր գյուղը և փախչեր այնտեղ ուր կկտրեր աչքը:

Նշենք միայն Արծկե գավառում քրդերի կողմից ավերված գյուղերի անվանացանկը. Գագուխ /58 տուն , 998 հոգի/, Վերին Սիփան /35, 482/, Վարի Սիփան /14, 220/, Առէն /120, 1,675/, Առէնջկուս /57, 943/, Կոձէրին /27, 283/, Գիւզէլ /12, 157/, Խոռանց /37, 512/, Բարկաթ /15, 137/, Արձռայ /52, 542/, Ղարա-քէշիշ /41, 483/, Վիճկացռօկ /15, 172/, Նորշէն /33, 542/, Եգիձոր /24, 283/, Գէրէկլի /35, 432/, Բէշնագոմեր /36, 447/, Անուշաղբիւր /15, 147/, Նորշենջղ /36, 482/: Ընդ. 662 տուն, 8937 մարդ[10]:

Նույն ճակատագրին են արժանանում Երվանդունիք (Հայոց Ձոր) գավառի Քերց գյուղը՝ պաշարվելով Ոստանի քրդերի կողմից: Երբ չեն կարողանում ավար ձեռք բերել, սպանում են 1 անձ և 8 հոգու՝ սպառնալով վերադառնալ և սրախողխող անել նրանց: Իսկ Խեք գյուղի 100 ոչխարները տարվում են, որոնք միայն վերադարձվում են կուսակալի շնորհիվ:[11]

Մինչև 1896թ. դեպքերը Նորդուզի գյուղախմբում կար 380 հայ ընտանիք, իսկ 1897թ. մնաց 277-ը: Նորդուզը կոտորածի ժամանակ հովանավորվեց Հաջի աղայի կողմից, իսկ Ադիլջեւազը՝ ցեղապետ Հուսեին փաշայի:[12]

Պատրիարքության փոխանորդ Վասպուրականի Տ.Սահակ վարդապետ Բագրևանդցին դիմում է Ն.Ս.Օծության Ամենայն Հայոց Տ.Տ.Սկրտիչ վեհափառ կաթողիկոսին, ասելով որ հունիս ամսին Վասպուրականում տեղի ունեցած դեպքերի հետևանքով մոտ 20.000 հայեր մահացան, 30.000-ը՝ մահմեդական դարձան, իսկ մյուսներն էլ անտեր, անտուն, անոթի և անօգնական մնալով իրենց փրկությունը գտան կրոնափոխության մեջ:[13]

---

[9] «Հնչակ», Լոնդոն, 1896, ապրիլի 15, թիվ 8, էջ 62:
[10] Նույն տեղում, էջ 63:
[11] Նույն տեղում:
[12] Հ.Մ.Պողոսյան, Վասպուրականի պատմությունից 1850-1900, Ե., 1988, էջ 277:
[13] ՀԱԱ, ֆ.56, ց.16, գ.184, թ.48(շրջ):

Հայոց-Ջորի ժողովուրդը, այդ թվում նաև քաղաքի անձիք դիմում են ռուսական վսեմ հյուպատոսին և խնդրում ընդունել ռուսական Օրթոդոքս եկեղեցու ուղղությունը: Հայ ժողովրդի մի մասն էլ իր փրկությունը կապում էր կաթոլիկ եկեղեցու հետ՝ ցանկանալով ընդունել կաթոլիկական դավանանքը:

Վարդապետը շարունակում է. «Սկսկալելով Ձեր վեհափառության իմաստուն տնօրինությունը, մենք իբրև քրիստոնյա եկեղեցու վարդապետ նախընտրում ենք, հայ ժողովրդին տեսնել Քրիստոնեական եկեղեցուն մեջ, քան Մահմեդականության»:[14]

Ինչպես նշում են Ե.Սահակյանն ու Լ.Մկրտչյանն ինքնապաշտպանության ժամանակ Վանում կողոպտվեց 1514 և հրդեհվեց 354 տուն, սպանվեց ավելի քան 546 և առևանգվեց 208 մարդ: Քաղաքից ինքնապաշտպանների հեռանալուց հետո, Շաքիրը թուրքական կոմիտեի հրահանգով թալանեց և ավերեց Վարագա վանքը, ինչպես նաև հրդեհեց վանքի հյուրանոցն ու ուսումնարանը: Վանի բոլոր եկեղեցիները նույնպես հրդեհվեցին: Վարագա վանքին հասցված նյութական վնասը հասնում էր 15,320 լիրայի[15]:

Ավերածությունների մասին խոսում է նաև Կ.Զ.Թառոյանը, ասելով որ Այգեստանում, այրվեցին ու ավերակների վերածվեցին ավելի քան 3000 տուն, իսկ 1000-ից ավելի հայեր զոհվեցին:[16]

Ինչպես հաղորդում են եվրոպական պետությունների և հյուպատոսների պահպանված զեկուցագրերը, կոտորածի արդյունքում զոհվեց ավելի քան 300.000 հայ, 290.000 արևմտահայ գաղթեց օտար երկրներ, ավերվեց 8000 հայաբնակ գյուղ, տակնուվրա արվեց 50.000 տուն, որբացան 100.000 երեխաներ, իսկ 100.000-ը՝ դարձան հաշվանդամ:[17]

Ողջ Վասպուրականով տարածվեց սովն ու համաճարակը, որի արդյունքում մի քանի ամսվա ընթացքում զոհ գնաց 6000 մարդ: Հետևանքն եղավ այն, որ հազարավոր հայեր բռնեցին գաղթի ճամփան և սահմանակից Աղբակը, Ալջաւազը և Արճեշն ամբողջությամբ դատարկվեցին:[18]

Մոտ 160 հայեր դաժանորեն մորթվեցին Մարմրտանի գավառի 20 գյուղերում, անվնաս չմնացին նաև Բոհտան գավառի քաղաքներն ու գյուղերը:

---

[14] Նույն տեղում:
[15] Ե.Սահակյան և Լ.Մկրտչյան, «Ինքնապաշտպանական կռիվները Վանում», «Զարթոնք», Բեյրութ, 18 հոկտեմբերի, 1975, էջ 2:
[16] Կ.Զ.Թառոյան, Արևմտահայերի ազատագրական պայքարը 19-րդ դարի վերջ և 20-րդ դարի սկզբներին, Ե.1980, էջ 114:
[17] Կ.Զ.Թառոյան, «Արևմտյան Հայաստանը, արևմտահայերի սոցիալ-քաղաքական և ազատագրական պայքարը սուլթանական Թուրքիայի բռնատիրության դեմ 1878-1908թթ.», Ե., 2001, էջ 335:
[18] Ե.Սահակյան և Լ.Մկրտչյան, նշվ. հոդված, էջ 2:

Սղերդի շրջակայքի մոտ 27 գյուղեր, այդ թվում Սղերդ քաղաքը ենթարկվեց կոտորածի, այդ մասին վկայում է Վարդան վարդապետն ասելով, որ. «Կոտորել են Սղերդ քաղաքի բնակիչներին: Կրպակներն ու տները թալանված են, կանայք ու աղջիկները՝ բռնաբարված, թեմական առաջնորդարանի, եկեղեցիների եւ դպրոցների դռները ջարդված են ու թալանված»:[19] Ավերված են Սղերդի կազայի էրուն նահիեի 9 գյուղ, ինչպես նաև կազայի Շիրվան նահիեի գյուղերը «թալանված են ամբողջությամբ, բնակչության մեծ մասը կոտորված է, աղջիկներն ու կանայք բռնաբարված են, նրանց մի մասը ցրիվ է եկել տարբեր կողմեր եւ մեռել քաղցից ու ցրտից»:[20]

Թալանվեցին և այրվեցին Սարի ս.Աստվածածնի, Սգավարակի, Կեչսուի ս. Կիրակոսի վանքերը, իսկ վանականներին սպանեցին կամ էլ իսլամացրին: Այսպես օրինակ, Արզեսի քահանային թուրքերը կապել էին մի ծիու պոչից և բաց թողել... Նադիր-օղլի և Ալի բեկ ավազակները 10 ծերուհիների և 20 մանկահասակ երեխաների, Գանձակ գյուղում ցած էին գլորել անդունդից՝ քարեր գցելով նրանց վրա: Այստեղ երկու օր շարունակ լսվում էին մեռնողների սրտամորմոք ծայները: Բացի նյութական և մարդկային զոհերից բարբարոսը ոչնչացնում էր ազգային հնություններն ու պատմական հուշարձանները, բազմաթիվ մատյաններ ու վավերաթղթեր, որոնք պահվում էին եկեղեցիներին կից մատենադարաններում կամ առանձին մարդկանց մոտ:

Վանից հրահանգ ստանալով քրդերը լցվեցին հայկական գյուղերը և կազմակերպեցին զանգվածային սպանդ ու կողոպուտ:

Խիզանի կայմակամը հրամայել էր. «15 տարեկանից փոքրերին չկոտորեք, իսկ չափահասներին նախ-պետք է թուրքացնել եւ ապա միայն սպանել, որպեսզի նրանց որդիները հայրերի թուրքական գրեզմանը տեսնելով, այլեւս չհիշեն իրենց հայկական կեղտոտ ծագումը»:[21] Սպանվեցին շուրջ 400 հոգի Կազանի 40 գյուղերում, այդ կոտորածն իրականացվում էր Ջալալեդդինի որդու կողմից: Շատ մեծ կորուստ տվեց Աղբակ գյուղի բնակչությունը, շրջապատված լինելով քրդերով, չկարողացավ դիմել ինքնապաշտպանության: Աղբակի մնացած հայաբնակ գյուղերից կատորվեցին Բազ՝ 60 տուն, Խառատուն՝ 32, Սորատեր՝ 30, Բժնկերտ՝ 35,Կարապալի՝ 13, Աշկերտ՝ 4, Մալքավա՝ 30, Լաշկոտ 30, Ենկունի՝ 75, Հասպիստան՝ 45 և Ջակովկ՝ մեկ տուն հայ:[22] Գյուղերի բնակչության է-ը զոհվել էին: Ջակովկ գյուղի հայ ընտանիքը, որը միակն էր և բաղկացած 40 շնչից իսլամացվել էր:

---

[19] Կ.Պողոսյան, նշվ. աշխ., էջ 454:
[20] Նույն տեղում:
[21] Նույն տեղում, էջ 453:
[22] Նույն տեղում:

Աղբակի շուրջ 23 գյուղերից թալանվեցին 11,2 հազար ոչխար, 500 գոմեշ, 1200 կով և եզ: Կողոպտվելուց հետո գյուղերը վերածվում էին մոխրակույտի:

Սպարկերտի 14 հազար հայերից 4000-ը կոտորվեց, 2000-ը փախստական դարձավ, 8000-ը մահմեդականացավ, իսկ 1000-ը մի կերպ անցավ Մոկս:[23] Սարսափելի կոտորածներ տեղի ունեցան Արճեշում, Գյավաշում, Հայոց ծորում և Հարաչանայում: Արճեշում, երկրորդ ջարդից հետո, բնակչությունն ամբողջությամբ դատարկվեց: Այստեղ մոտ 200 հոգու սպանեց քուրդ ավազակապետ Ձեֆարը, իսկ սպանվածների թիվն ավելի շատ էր Բելու գյուղում: Աբդուլ Համիդ և Աբդուլ Կաֆյուր եղբայրներից յուրաքանչյուրը սպանեցին 200-ական հայ մեկ այլ վայրում: Եթե քրդերը հիմնականում թալանում էին, ապա թուրքերը հրդեհում, բռնաբարում,-պատվազրկում և կրոնափոխ էին անում հայերին:

Ինչպես նշվում է «Մշակ» թերթում. «Կլոր-Դար թաղին մէջ տակաւին իրենց մայրենի եկեղեցիէն չը բաժանուող քանի մը տուներն ալ համակերպեցան դաւանափոխ ըլլալու. Տ.Մեսրոպ քահանան միայն բացառութիւն կը մնայ: Այդ թաղին մէջ կաթոլիկ վարժարան մը պիտի շինուի. – Արարուց եկեղեցւոյ շրջանակին մէջ գտնուող Այիճեանց թաղի ազգակիցները, 110 տունէ բաղկացած, նոյնպէս դիմեցին կաթոլիկութեան, իրենց թաղապետ Ճոնեանի առաջնորդությամբ, որուն տուները լեցունկեկ ամսականներով պիտի վարձուին, մատուռի և վարժարանի վերածուելու համար,- աւելորդ է ըսել թէ լատինական: -Բուզանդեան Մարտիրոս վարժապետ կաթոլիկներուն տրամադրութեան տակ դրաւ իր մասնաւոր վարժարանը, ուր 200 հայ աշակերտուհիներ կը յաճախեն. վարժապետը ու տղան զոհացուցիչ մսաթոշակ պիտի ստանան և պիտի շարունակեն պաշտօնավարել նոյն դպրոցին մէջ: -Յանկոյսեր եկեղեցւոյ թաղին մէջ ֆռէռները 1300 ոսկիի սակարկեցին մասնաւորի մը նորակառոյց տունը և ընդարձակ այգին, ուր պիտի կառուցանեն եկեղեցի, վարժարան և ֆրանսիական հիւպատոսարան»:[24]

Իրավիճակը հասկանալու համար կարելի է մեջբերել Արսեն վարդապետ Մարգարյանի «Վիճակագիրք Վանա նահանգի մեջ պատահած կոտորածին և ավերմանց» զեկուցագրից հատվածներ, որտեղ ականատեսը դիմելով Ամենայն հայոց կաթողիկոսին, նշում է, որ թալանվեցին Վանի 6 թաղեր, ինչպես նաև 1514 տուն, իսկ սպանվածների թիվը հասնում էր 1365 մարդու: Թալանի ու կողոպուտի հետևանքով քաղաքացիներին հասցրած վնասը կազմում էր

---

[23] Նույն տեղում:

[24] «Մշակ» թերթ, 1899, թիվ 19, փետրվարի 2, էջ 2:

42,925 ոսկի, կողոպտված ու վնասված եկեղեցիների գույքի արժեքը՝ 25.000 և 3 դպրոցներինը՝ 2100 ոսկի:[25]

Նույն Ն.Արսեն վարդապետ Մարգարյանը, Վասպուրականի Առաջնորդաան փոխանորդը, դիմում է Ամենայն հայոց կաթողիկոս Տ.Տ. Մկրտիչ Խրիմյանին, ասելով, որ կոտորածից շաբաթներ են անցել, բայց ժողովրդի վիճակը սոսկալի է և կասկածներ կան, որ սկսվելու է նոր կոտորած: Չնայած թուրքերին չհաջողվեց կոտորել քաղաքամեջի և Այգեստանի կենտրոնական թաղերի հայերին, մինչդեռ ամբողջությամբ կոտորեցին Հայկավանքի, Ս. Յակոբի, Կլորդարի և գյուղերի ու գավառների բնակությանը: Հակառակ դրան կենտրոնական թաղերում դիմեցին ինքնապաշտպանության, ինչպես նշվում է տեղեկագրի Ա. Մասի մեջ, այդքան զոհեր ու այրունահեղություններ չեղան, իսկ թուրքական զորքը տվեց 500 զոհ:[26] Այդ պատճառով, որքան դաժան ու սոսկալի կարող էր լինել նոր ջարդը, երբ թուրք խուժանն այդքան բարկացած էր և անկասկած կփակեր բոլոր ապաստանելու ճանապարհները:

Ուստի ժողովուրդը, հատկապես ողջ Վան քաղաքը, տրամադրված էին իրենց ընտանիքներով գաղթել Ամերիկա: Այդ օրերին, ամերիկացի բժիշկ Ռեյնոլդսը, դիմելով Վանի բնակիչներին, այսպես է ասել. «Երանի՞ թե բոլոր թուրքահայերը այժմեն իրենց նոր հայրենիք մը ընտրեն Ամերիկայի մեկ ընդարձակ նահանգին մեջ և հոն կազմեն նոր Հայաստան մը, զի Թուրքիայի մեջ դուք ապագա չունեք»:[27]

Սակայն Ամերիկա գաղթելու համար անցագիր չէր տրվում, հատկապես արտասահմանի ճանապարհով: Միայն մի քանի ընտանիքների հաջողվեց ամերիկացի բժշկուհի Միս Քեմփլի օգնությամբ անցնել արտասահման:

Հայերի համար այլևս ապրելու միջոցներ չկար Վասպուրականում: Հայտնի է, որ կոտորածի հետևանքով Հայոց-Ձորի, Գավուշի, Արճեշի, Արճկեի, Թեմարի, Խոշաբի և Կարծակունու շատ հայ գյուղացիներ մահմեդականություն ընդունեցին՝ կոտորածից փրկվելու համար: Եվ դեռ այդ գործընթացը շարունակվում է: Վասպուրականի բոլոր գավառներում եկեղեցիները քանդված էին կամ մահմեդական աղոթատեղեր դարձած, շատ տեղերում հայ քահանաները սպանված էին կամ էլ մահմեդական կրոնավորներ դարձած: Հայ պաշտամունքը և ժամերգությունը պահպանվում էր միայն Այգեստանի Նորաշեն, Արարք և քաղաքամեջի Ս.եկեղեցիների մեջ: Եթե այսպես շարունակվի, նշում է Ն.Արսեն վարդապետ Մարգարյանը, Վասպուրականի մեջ հայ անունով մարդ չի լինի և ոչ էլ հայ եկեղեցի կամ սրբություն:

---

[25] Մատենադարան, Կաթ. դիվան, ց. 20, թղթ. 236 ա, վավ. 226, թ. 2:
[26] ՀԱԱ, ֆ. 56, ց. 16, գ. 184, թ. 51-53:
[27] Հ.Ա.Պողոսյան, նշվ. աշխ., էջ 284:

Ուստի Արսեն վարդապետ Մարգարյանը խնդրում է Ամենայն Հայոց S.S. Մկրտիչ կաթողիկոսին միջոցներ կիրառել Վասպուրականի հայությանը նորանոր կոտորածներից և կրոնափոխությունից զերծ պահելու համար.[28]

Այս ամենը լսելով Հայոց հովվապետ Մ.Խրիմյանը, որոշում է հեռագրով բացատրություն պահանջել Կ.Պոլսի ռուսական դեսպան Ալեքսանդր Նելիդովից, որն էլ պատասխանեց ծերունի Հայրապետին. «Հայոց եկեղեցական պետերուն պարտականութիւնն է յորդորել իրենց ժողովուրդը խաղաղութեան և հնազանդութեան իրենց տիրապետներուն»:[29]

Այսպիսով, Ռուսաստանը, ինչպես նաև մյուս եվրոպական պետությունները հեգնանքով էին վերաբերվում այդ ամենին: Օրինակ Ռուսաստանն առաջնորդվում էր հետևյալ սկզբունքով. «Հայաստանն առանց հայերի», իսկ Անգլիան պնդում էր, որ անգլիական նավատորմը չի կարող բարձրանալ հայկական լեռները: Գերմանիայի կայսր Վիլհելմ 2-րդը, «Նոր օր» թերթի, թիվ 17-ում նշվում է, որ այցելելով մահմեդական կրոնի երկու կարևոր քաղաքները Մեքքա և Մեդինե, ծաղիկ դրեց Մուհամեդի գերեզմանի վրա, ինչ ծաղրանք... հոգեկան միախառնումով քաջալերեց թուրք մոլեռանդ ժողովրդին և նրա կառավարությանը:[30] Այս նույն միտքը նշվում է նաև արխիվային մեկ այլ փաստաթղթում:[31] Փաստորեն հայերի ճակատագիրը հանձնվում էր Օսմանյան սրին, հայությունը գազանաբար ոչնչացվում էր, իսկ Վիլհելմ 2-րդը ցինիկաբար հայտնում էր, որ հայերից պետք է թողնել մի մարդ այն էլ թանգարանում ցուցադրելու համար:

Ռուս փոխհյուպատոս Վլադիմիր Մանսկին, շրջելով Վանի շրջակայքով, կոտորածից հետո գրում է. «Իմ հանդիպած հայկական գյուղերում ես չտեսա կյանքի անգամ փոքրագույն նշան: Գյուղերն ավերված չէին, բայց ունեին տարօրինակ ու խղճուկ տեսք... Ամենուրեք թալան էր...»:[32]

Վանի վիլայեթի բնակչությունը կոտորածից հետո պակասեց մոտ 15-20%-ով:[33]

Կուսակալ ազմ փաշան, կոտորածից անմիջապես հետո մի քանի շաբաթ անց, հրաժարական տվեց, քանի որ ապարդյուն անցան նրա ջանքերը կանխելու կոտորածը: Հրաժարականն ընդունվեց և նոր կուսակալ ճանաչվեց Շեմսեդդին բեյը, որը Թեհրանի օսմանյան դեսպանն էր: Հայերը մեծ հույսեր

---

[28] ՀԱԱ, ֆ. 56, ց. 16, գ. 184, թ. 51-53:
[29] Թորգոմ եպիսկոպ.Գուշակեան,« Խրիմյան Հայրիկ», Անթիլիաս. 1990, էջ 165:
[30] ՀԱԱ, ֆ. 427, ց. 1, գ. 8, թ. 8:
[31] ՀԱԱ, ֆ. 427, ց. 1, գ. 30, թ. 11:
[32] Կ.Պողոսյան , նշվ. աշխ., էջ 454:
[33] Հ.Մ.Պողոսյան, նշվ. աշխ., էջ 277:

էին կապում նորընտիր կուսակալի հետ:[34] Նա բնավորությամբ շատ հանգիստ մարդ էր և ողջ ճանապարհին հանդիպած ավերածությունը՝ նրան շատ էր ցնցել: Մինչ Շեմսեդդինը կժամաներ Վան, Սաաեդդինը ժամանակավորապես ստանձնեց կուսակալի պաշտոնը: Այստեղ էր գտնվում նաև Նազմ փաշայի օգնական Ստեփան Մելիքյանը, որը զրկված էր բոլոր տեսակի իրավունքերից, նրան նույնպես մի քանի ամիս հետո շնորհազրկեցին և հեռացրին Վանից:

Վանից հեռացավ նաև միսիոներուհի Միս Քեմփլը, որը ջարդի տեսարանները տեսնելուց հետո, այստեղի կյանքն անհանդուրժելի համարեց:

Պարսկական ընդհանուր հյուպատոս Միրզա-Հյուսեին խանը մեկնեց Վանից հրաժարվելով այդ պաշտոնից: Իսկ երբ պարսկական կառավարությունը պնդեց, որ խանը շարունակի իր պաշտոնը, նա առանց երկմտելու պատասխանեց, որ չի ուզում պաշտոնավարել այնպիսի երկրում, որտեղ ոչխարի նման մորթում են մարդկանց և արդարության փոխարեն կամայականություն է տիրում: Արդեն հայտնի դարձած՝ Սաաեդդին փաշան (կայսերական բարձրագույն քննիչ), իր կատարած, սխրագործություններին համար, Օգոստափառ Վեհապետից ստացավ Օսմանի առաջին կարգի պատվանշան, որպես խրախուսանք, ինչպես նաև կայսերական նվեր 500 ոսկի:

Այսպիսով, ավարտվեց 1896թ. հունիսյան հերոսամարտը, այն տևեց 9 օր, հունիսի 3-ից մինչև հունիսի 11-ը, որն ուղեկցվեց թալանով, սպանություններով, բռնություններով, խոշտանգումներով:

1890-ական թվականների արևմտահայերի ջարդը, թուրքական պետության կողմից կազմակերպված թուրք և քուրդ հրոսակների ու կանոնավոր բանակի զինվորների միջոցով իրականացված, առաջին զանգվածային ցեղասպանության փորձն էր: Հայ ժողովրդի մոտ կորավ վեջնականապես թուրքական կառավարության նկատմամբ հավատը: Նրանք այլևս չէին հավատում նրանց սուտ խոստումներին և հաստատ գիտեին, որ իրենց իսկ սեփական երկրում չկա և չի կանող լինել ինչպես կյանքի, այնպես էլ գույքի ապահովություն:

Consequences of the Van slaughters in 1896 th

According to the European countries and councils documents during the consequences of the Van slaughters 300.000 Armenian people, 290.000 became emigrants, destroyed 8.000 villages, 50.000 houses, 100.000 children became orphans, 100.000 became invalids.

The first experience of West-Armenians genocide from Turkish government was take place in 1890[illegible]. The Armenian people understood that even in their own country there is and will be no insurance of the life and property.

---

[34] Մշակ., 1896, թիվ 93, օգոստ. 13, էջ 3: